ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Լենտեքս ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/39-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	Լենտեքս	Լենտեքս	Լենտեքս ՍՊԸ	Սվիտեր՝ ուսադիրներով և տարբերանշաններով, ամենօյա 200 հատը՝ հյուսված է 50/50% բամբակ/ակրիլ թելից՝ 400-450 գ/մ2 խտությամբ՝ 12 gg - 14gg դասի հյուսվացքով: 700 հատը հյուսված՝ է 50/50% բամբակ/ակրիլ թելից՝ 500-550 գ/մ2 խտությամբ՝ 6 gg - 7gg դասի հյուսվացքով: Գործվածքը խիտ, չընդարձակվող (չլոճվող) ՝ առաջնային լվացում անցած: Թևքերի արմունկների և ուսագոտու հատվածները վրակարված և շեղանկյուն զարդակարված են (2սմ*2սմ փախլավանձև շուլալված) երկշերտ գործվածքներով (ստորին շերտը ֆլիս, ֆելտ կամ պառալոն, վերին շերտը՝ մուգ կանաչափիրուզագույն 220-235 գ/մ2 մակերեսային խտությամբ, 44 % բուրդ, 54 % պոլիէսթեր և 2 % լաիկրա բաղադրությամբ կամ համարժեք կտորով): Ձախ կրծքին վրակարված է ձևավոր

				գրպանիկ, որը փակվում է կափույրով և կոճկվում՝ կոճգամով: Գործվացքի և կտորի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Նույնանման վրակարված են, նաև, թևքերի արմունկների հատվածը՝ ձգված, օվալաձև կտրվածքով : Հյուսվածքի տեսակը՝ “half milano”: Թևքի միացման կարի մեջ մշակված են երկտակ նույն գործվածքից 4,8սմ լայնությամբ, 16-17 սմ երկարությամբ ուսադիրներ, որոնց ազատ ծայրերը կոճկվում են մետաղական սև կամ մուգ կանաչ գույնի կոճգամներով: ՈՒսադիրների վրա անցկացվում է պատա՝ կոչման տարբերանշաններ (ուսադիրներ): Պատա ուսադիրները զարդանախշով են, վրան ՝ ասեղնագործ զինվորական կոչումներով: Թևքերն ու մարմինը հյուսված են մուգ կանաչ մանվածքից և վերջանում են 6,5-7,0սմ լայնությամբ մանժետներով: Վիզը փակ, կլոր, մշակված 3սմ լայնության կրկնակի մանժետով: Ձախ և աջ թևքերին, վերին եզրակարից 9 սմ ներքև, համապատասխանաբար, կարվում են ՛՛ՀՀ զինանշանը՛՛ և ՛՛ՀՀ ԱԱԾ՛՛ թևքանշանը: Ձախ կրծքին՝ ՛՛ՀՀ ԱԱԾ՛՛ գրվածքն է կարված: Աջ կրծքին ամրացնելու համար նախատեսված ՝ զորատեսակի կրծքանշանները մատակարարվում են առանձին փաթեթավորված՝ ըստ Պատվիրատույի կողմից պահանջվող գրվածքի տեսակների և քանակների /ընդհանուր 900 հատ/: Թևքանշանները, կրծքանշանները և ուսադիրները

				պատրաստված են մուգ կանաչ թելով կանաչ կտորի վրա՝ ասեղնագործման կամ ջակկարդ գործվածքի միջոցով, եզրերը մաքուր եզրակարված են merrow մեքենայով, մուգ կանաչ թելով: Սվիտերի արտաքին տեսքը ՝ համաձայն Պատվիրատույի կողմից ներկայացվող նմուշի: Չափս հասակային (42/2-70/6) և կոչումային (սերժանտականից գեներալ-մայոր) տվյալները Կատարողին կտրամադրվեն պայմանագրի կնքումից հետո: Պիտակավորումը: Սվիտերի ներսի կողմից փակցվում են ծոծորակի հատվածում՝ չափսը, ձախ կողակարին՝ արտադրանքի խնամքի վերաբերյալ ստուգիչ 3.5սմ*5սմ պիտակը: Պիտակի վրա պետք է նշված լինի նաև արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը, մրցույթի կոդը: Փաթեթավորումը՝ արկղերով, մեկ արկղի մեջ՝ 20հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Արկղերը՝ պիտակավորված: Պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսը, մատակարար և/կամ արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Лентекс в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/39-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
2				